

ամբապնդուելու համար կրօնի շունչով եւ թրիստոնէական վարդապետութեամբ: Պէտք էր թոյլ, կենցաղասէր, շահախնդիր եկեղեցականներու դէմ հանել եկեղեցասէր, անձնուրաց, հոգելից, հաւատքով տոգորուած եւ զիտութեամբ մարդուած քահանայութիւն, սրբելու համար Եկեղեցին տիրող զեղծումներէ եւ առանց լքանելու ընդզիմադրութիւններու եւ հալածանքներու առաջ՝ պահպանել զիրքը վերջնական յաղթութեան յուսով ներշնչուած:

Այս նպատակով սահմանուեցաւ Մեծ Անապատի մէջ սկիզբ ընել դասախօսական ընթացքներու: Առ այս իրենց գործակցութիւնը խոստացան՝

1. Տէր Կիրակոս, մէկը անապատի հիմնադիրներէն, ծագմամբ Տրապիզոնցի, Պետրոս Կարկառեցւոյ Դպրոցէն:
2. Պօղոս Վ. Մոկացի:
3. Մովսէս Վ. Տաթեւացի:
4. Ներսէս Վ. Մոկացի:
5. Թումա Եպիսկոպոս:
6. Դաւիթ Եպիսկոպոս:

Իսկ Սարգիս պարոնտէր, «հայրն Անապատին» յանձն առաւ ըլլալ «հոգարարձուն անապատին ի մարմնաւոր կողմանէ»: Ասոնք, ինչպէս կը գրէ Դաւրիթեցի «բազում ժամանակս կացին ի միասին» (Դաւր. 259—260), այս ինքն մօտաւորապէս 1613—1620:

Թէ ուսման ի՞նչ ծրագիր ընտրուած էր